ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը, որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան28 հասցեում, ստորև ներկայացնում է **ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/1 ՆԱՃՀ** ծածկագրով ԲԱՑ ընթացակարգի արդյունքում 2014թ մարտի 05-ին կնքված նախագծային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրում 2014թ մարտի 28-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ 1:	Գնման պայմանագիրը կնքվել է **Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ 276 - կմ 297 5 կմ առանձին հատվածների հիմնանորոգման նախագծային** աշխատանքների իրականացման համար: Գնման պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ առանց տվյալ գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների: Հաշվի առնելով, որ դեռևս քննարկման փուլում է պայմանագրի կատարման համար 2014թ ՀՀ պետական բյուջեից համապատասխան միջոցներ նախատեսելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը, իսկ Գնման պայմանագրի ժամկետն ավարտվում է 30.03.2014թ, անհրաժեշտ է երկարաձգել Գնման պայմանագրի ժամկետը, պայմանագրի 4.3 կետի համաձայն համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Կողմերի միջև վճարման ժամանակացույցի հաստատման վերաբերյալ համաձայնագիր կնքելու համար:
Փոփոխության նկարագրություն:	Փոփոխվել է Գնման պայմանագրի թիվ 1՝ «Տեխնիկական բնութագիր - Գնման ժամանակացույց» հավելվածի «Աշխատանքների կատարման ժամկետը» բաժինը:
Փոփոխության հիմնավորում:	05.03.2014թ կնքված N ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/1 ՆԱՃՀ նախագծային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ առաջատար մասնագետ Հասմիկ Օրդուխանյանին:

Հեռախոս՝ /010/ 58-05-23 :

էլ. փոստ՝ hordukhanyan@transportpiu.am:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/1 ՆԱՃՀ - 1

05.03.2014թ ԿՆՔՎԱԾ N ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/1 ՆԱՃՀ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 28.03.2014թ

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ԾԻԳ>> պետական հիմնարկը (այսուհետ՝ ԾԻԳ), ի դեմս պետական հիմնարկի տնօրեն Ա.Բախտամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու),մի կողմից, և <<Ճաննախագիծ>> ինստիտուտ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Բաղալյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 05.03.2014թ կնքված N ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/1 ՆԱՃՀ նախագծային աշխատանքների կատարման պետական գնման (այսուհետև՝ Գնման Պայմանագիր) 7.3 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին Գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույնով Կողմերը համաձայնում են Գնման պայմանագրում 2014թ մարտի 28-ից կատարել ներքոգրյալ փոփոխությունը՝ Գնման պայմանագրի թիվ 1՝ «Տեխնիկական բնութագիր - Գնման ժամանակացույց» հավելվածում Տեխնիկական բնութագրի վերջին՝ «Աշխատանքների կատարման ժամկետը» բաժնում «30 մարտի 2014թ» բառերը փոխարինել «25 ապրիլի 2014թ» բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Գնման պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Գնման Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին՝ մեկական օրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

3. Կողմերի հասցեները. բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության	<<Ճաննախագիծ>> ինստիտուտ ՍՊԸ
«Տրանսպորտի ԾԻԳ» ՊՀ	ք. Երևան, Աճառյան 54բ
ք.Երևան, Նալբանդյան28,	<<Զարգացման հայկական բանկ>> ԲԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,	Հ/Հ 1810052093643312, ՀՎՀՀ 00813453
Հ/Հ 900011321214, ՀՎՀՀ 02702598	
Ստորագրություն	Ստորագրություն
Կ.Տ	Կ.Տ